ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)27358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 38-Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով

համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2017թ. նոյեմբերի 29-ի թիվ 11 հերթական նիստի օրակարգը.

1. Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2017թ. հոկտեմբերի 30-ի թիվ 35-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2. Արարատի մարզի Դալար համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման թույլտվություն տալու, օտարման մեկնարկային գինը և ժամկետը սահմանելու մասին:

3. Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 28-ի թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 39-Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 35-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով

համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 30-ի «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»՝թիվ 35-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.՝

Որոշման տեքստում՝.

1. 1 –ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝

<<Թույլատրել Դալար համայնքի ղեկավարին Դալար համայնքի տարածքում Գ. Նժդեհի փողոցի թիվ 64/1 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության, բնակելի կառուցապատման հողամասն/կադաստրային ծածկագիր՝ 03-032-0035-0016, մակերեսը՝ 274,5 քառ. մետր/ ուղղակի վաճառքի եղանակով, ամբողջ կադաստրային արժեքով, ընդլայնման նպատակով օտարել հարակից Գ.Նժդեհի փողոցի թիվ 64 հասցեում /կադաստրային ծածկագիր՝ 03-032-0035-0006, մակերեսը՝ 0.192հա/ բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասի սեփականատերեր Խաչատուր Մեջլումյանին, Նելի Մուլթանյանին, Արմեն Մեջլումյանին, Ցոլինե Մեջլումյանին և Մերի Մեջլումյանին, քանի որ նշված օտարվող հողամասի չափերը, տեղանքի ռելիեֆն ու դիրքը թույլ չեն տալիս, որպես առանձին գույքային միավոր օտարել, որ այն դառնա առանձին հրապարակային սակարկությունների առարկա և չի կարող օգտագործվել այլ անձի կողմից, քանի որ այնտեղ հնարավոր է մուտք գործել միայն ընդլայնվող հողամասից:

2. 2-րդ կետի 1-ին ենթակետում <<71507(յոթանասունմեկ հազար հինգ հարյուր յոթ)-ը փոխարինել «144936(մեկ հարյուր քառասունչորս հազար ինը հարյուր երեսունվեց»-ով:

3. 2-րդ կետից հանել 2-րդ ենթակետը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 40-Ա

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով <<Արտկապիտալ>> ՍՊԸ-ի կողմից տրված Զ. Անդրանիկի 69/1 հասցեով շինության շուկայական գնահատման հաշվետվությունը՝

համայնքի ավագանին որոշում է

1. Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդ-վաճառքի կարգով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող Զ. Անդրանիկի 69/1 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 03-032-0113-0013-001, մակերեսի չափը՝ 117 քառ. մետր, նպատակային նշանակությունը՝ Արտադրական/ անշարժ գույքը:
2. Դալար համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող Զ. Անդրանիկի 69/1 հասցեով շինության մեկնարկային գինը սահմանել 700.0 հազար դրամ:
3. Դալար համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 69/1 հասցեով շինության աճուրդ-վաճառքը կազմակերպել 2017թ. դեկտեմբերի 28-ին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 41-Ն

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 43-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով,

Ելնելով ծառայողական նոր ավտոմեքենայի համար ձմեռային անվադողեր ձեռք բերելու և բնական սեղմված գազի սարքավորում տեղադրելու անհրաժեշտությունից

համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 43-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.՝

Որոշման տեքստում՝

- բյուջեի ծախսային մասում <<կառավարման (01.01.01.51) ապարատին>> տողում <27395,0>> թիվը փոխարինել <<27715,0>>-ով, 14 կետում (4264 հոդ.) <<1250,0>>-ը փոխարինել <<1570,0>>-ով,
- <<Պահուստային ֆոնդի (11.01.02.51.) 4891 հոդվածով>> տողում <<2641,0>>-ն փոխարինել <<2321,0>>-ով: :

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -6

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՆՈՒՇ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
4. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ
5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ